ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2023Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 110 -Ա
ՈՐՈՇՄԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2023թ. բյուջեն ինն ամիսների ընթացքում ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ համամասնություններով.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հարկային եկամուտների գծով ինն ամսում նախատեսված 441635,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 362329,0 հազար դրամ կամ կատարվել է 82,0% -ով՝ այդ թվում.

1. Հողի հարկի գծով մուտքեր չեն նախատեսվել, փաստացի հավաքագրվել է 32275,4 հազար դրամ, որից ըստ գյուղերի՝ Այգեվան- 1374,7 հազար դրամ, Արաքս- 2106,1 հազար դրամ, Խանջյան – 3680,4 հազար դրամ, Լենուղի- 3023,2 հազար դրամ, Լուկաշին- 3503,7 հազար դրամ, Հացիկ- 3341,3 հազար դրամ, Մայիսյան- 2137,5 հազար դրամ,Մյասնիկյան- 4646,8 հազար դրամ, Նորավան-215,5 հազար դրամ, Սարդարապատ – 1181,0 հազար դրամ:
2. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար մուտքեր չեն նախատեսվել, փաստացի հավաքագրվել է 9662,4 հազ. դրամ:
3. Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլանով նախատեսված 145937,4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 109626,4 հազար դրամ կամ կատարվել է 75,1 %-ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան - 5016,2 հազար դրամ, Արաքս-4600,1 հազար դրամ, Խանջյան- 7990,59 հազար դրամ,Լենուղի-3589,7 հազար դրամ, Լուկաշին- 10395,0 հազար դրամ, Հացիկ- 10966,8 հազար դրամ, Մայիսյան-4006,3 հազար դրամ, Մյասնիկյան- 16639,7 հազար դրամ, Նորավան – 4910,1 հազար դրամ , Սարդարապատ- 22650,9 հազար դրամ:
4. Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկը պլանով նախատեսված 145937,4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 67688,4 հազար դրամ կամ

կատարվել է 46,4 %-ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան – 3362,4 հազար դրամ,Արաքս- 5772,1 հազար դրամ, Խանջյան- 3784,3 հազար դրամ, Լենուղի- 3755,3 հազար դրամ, Լուկաշին- 3619,1 հազար դրամ, Հացիկ- 6779,7 հազար դրամ, Մայիսյան- 6969,9 հազար դրամ, Մյասնիկյան- 3397,4 հազար դրամ, Նորավան – 1753,5 հազար դրամ , Սարդարապատ- 9221,7 հազար դրամ:

2. ՏՈՒՐՔԵՐ

Տուրքերի գծով ինն ամսում նախատեսված 72236,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 80979,1 հազար դրամ կամ կատարվել 112,1 %-ով:

1. Պետական տուրքերի գծով նախատեսված 30870,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 32810.1 հազար դրամ կամ կատարվել 106,3 %-ով:
2. Տեղական տուրքերի գծով նախատեսված 41366.2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 48169,0 հազար դրամ կամ կատարվել է 116,4 %-ով,որից ըստ գյուղերի՝ Այգեվան- 210,3 հազար դրամ, Արաքս- 1061,8 հազար դրամ, Խանջյան – 297,0 հազար դրամ, Լենուղի- 224,4 հազար դրամ, Լուկաշին- 586,0 հազար դրամ, Հացիկ-581,8 հազար դրամ, Մայիսյան- 265,0 դրամ, Մյասնիկյան- 1272,0 հազար դրամ, Նորավան – 123,0 հազար դրամ , Սարդարապատ- 1977,7 հազար դրամ:

Նույն թվում՝

ա) համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների և շինությունների շինարարությունը սկսելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 2863,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 3009,0 հազար դրամ կամ կատարվել է 105,1 %-ով:

բ) համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու աշխատանքներ կատարելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 1365,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 645,0 հազ. դրամ կամ կատարվել է 47,3 %-ով:

գ) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար նախատեսված 84.0 հազար դրամի դիմաց փաստցի մուտքերը կազմել են 100.0 հազար դրամ կամ կատարվել է 119 %-ով:

դ) համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանքի ընթացիկ տարվա վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 14245,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 16120,9 հազ. դրամ կամ կատարվել է 113%.ով,

ե) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 2240,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 4041,1 հազար դրամ կամ կատարվել է 126,3 % - ով:

զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար գազի և վառելիքաքսայուղային նյութերի վաճառքի գծով 4354,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 4922,5 հազար դրամ կամ կատարվել է 113,1 %-ով:

է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00- ից հետո աշխատելու թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 1151,5 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1554,2 հազար դրամ կամ կատարվել է 135,0 %-ով:

ը) համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 10483,6 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 11014,2 հազար դրամ կամ կատարվել է 105 %-ով:

թ) համայնքի տարածքում ընթացիկ տարում մարդատար տաքսի ծառայություն իրականացնելու թույտվության համար մուտք չի նախատեսվել, փաստացի մուտքագրվել է 50,0 հազար դրամ:

ժ) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի տարեկան թույլտվության համար նախատեսված 1150,0 հազար դրամի դիմաց ինն ամսում փաստացի մուտքագրվել է 1220,0 հազար դրամ կամ կատարվել է 106,1 %-ով,

ի) համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի տարեկան թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 900,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 800,0 հազ. դրամ կամ կատարվել է 88,8 %-ով:

լ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 2095,1 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2177,1 հազար դրամ կամ կատարվել է 103,9 %-ով:

3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 923073,7 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 922912,4 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով:

ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով նախատեսված 920916.5 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 920916.5 հազ. դրամ կամ կատարվել է 100 %-ով:

բ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսված 2157.2 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1995.9 հազ. դրամ կամ կատարվել է 92,5 %-ով:

գ) Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 284018,5հազար դրամի դիմաց մուտքագրվել է 255019,1հազար դրամ:

4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ եկամուտներից մուտքերի գծով նախատեսված 242436,3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել 224182,2 հազար դրամ կամ կատարվել է 92,4 %-ով:

Նույն թվում՝

1. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության գծով նախատեսված 42429,1 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 30622,1հազ. դրամ կամ կատարվել է 72,2 % - ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան- 912,90 հազար դրամ,Արաքս- 531,3 հազար դրամ, Խանջյան- 949,9 հազար դրամ, Լենուղի- 2419,5 հազար դրամ, Լուկաշին-301,2 հազար դրամ, Հացիկ-1346,5 հազար դրամ, Մայիսյան-40,0 դրամ, Մյասնիկյան- 770,1 հազար դրամ, Նորավան – 212,2 դրամ , Սարդարապատ- 468,5 հազար դրամ:
2. Գույքի վարձակալության գծով նախատեսված 3096,7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 3216,1 հազար դրամ կամ կատարվել է 103,8 % - ով:
3. ՏԻՄ-ներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցների գծով պլանով նախատեսված 4197.9 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 4197.9 հազար դրամ:
4. Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարների գծով նախատեսված

5017.9հազ. դրամի փաստացի մուտքը կազմել է 3590.8 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի նկատմամբ 71,6 %-ով:

5. Տեղական վճարների գծով նախատեսված 164594,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 147751,3 հազար դրամ կամ կատարվել է 89,8 % - ով,

որից Աղբահանության վճարների գծով նախատեսված 58890,3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 54685,3 հազար դրամ կամ կատարվել է 92,9 % - ով:

6. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների գծով նախատեսված 19600,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 30724,6 հազար դրամ կամ կատարվել է 156,8 % - ով:

7. Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներից նախատեսված 1050,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 200 հազար դրամ կամ կատարվել է 19% - ով:

8. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 2450,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքը ինն ամսում կազմել է 510,0 հազ. դրամ :

Արմավիր համայնքի 2023թ. բյուջեի եկամուտների ինն ամսում ընդամենը նախատեսված 1 963 400,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1 845 421,8 հազար դրամ կամ կատարվել է 94,0 %-ով, սեփական եկամուտների գծով նախատեսված 752 110,1 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 663 292,3 հազար դրամ կամ կատարվել է 88,2 %-ով:

ԾԱԽՍԵՐ/Վարչական բյուջե/

Արմավիր համայնքի 2023թ. բյուջեի ծախսերը ինն ամսում ըստ ծրագրերի կատարվել են՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. « Օրենսդիր և գործադիր մարմիններ» 01 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 290195,8 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 237173,2 հազար դրամ կամ կատարվել է 81,7 %-ով:

2. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» 01 բաժին 6-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 45900,0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 43652,7 հազ. դրամ կամ կատարվել է 95,1 %-ով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ոռոգում՝ 04 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 67500,0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 65928,8 հազար դրամ կամ կատարվել է 97,7 %-ով:

2. Ճանապարհային տրանսպորտ 04 բաժին 5 խումբ 1 դաս՝ նախատեսված 50000.0 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախս 2023 թվականի ինն ամսում կատարվել է 34127,9 հազար դրամի ծախս՝ 68,3%:

3. Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) Ոչ ֆին. ակտիվների օտարումից մուտքեր 04 բաժին 9 խումբ 1 դաս՝ նախատեսված -99500.0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է -125290,5 հազար դրամ :

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աղբահանում 05 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 240000,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել 185 851,9 հազար դրամ կամ կատարվել է 77,4 %-ով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Ջրամատակարարում 06 բաժին 3 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 56139,2 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 48197,2 հազար դրամ կամ կատարվել է 85,9 %-ով:

2. Փողոցների լուսավորում 06 բաժին 4 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 47000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 40989,5 հազար դրամ կամ կատարվել է 87,2 %-ով:

3. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) 06 բաժին 6 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 5400,0 հազար

դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 4538,8 հազար դրամ կամ կատարվել է 84,1 %-ով:

ՀԱՆԳԻՍՏ. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

1. Գրադարաններ 08 բաժին 2 խումբ 1 դաս՝ նախատեսված 28300,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 24349,3 հազար դրամ կամ կատարվել է 86,0 %-ով:

2. Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ 08 բաժին 2 խումբ 3 դաս՝ նախատեսված 29200,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 24442,2 հազ. դրամ կամ կատարվել է 83,7 %-ով:

3. Այլ մշակութային կազմակերպություններ 08 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 32800,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 20210,8 հազար դրամ կամ կատարվել է 61,6 %-ով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.Նախադպրոցական կրթություն ծախսերի գծով 09 բաժին 1 խումբ 1 դաս՝ նախատեսված 432 000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 377 545,9 հազար դրամ կամ կատարվել է 87,4 %-ով:

2.Արտադպրոցական դաստիարակություն 09 բաժին 5 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 150000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 133105,7 հազար դրամ կամ կատարվել է 88,7 %-ով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), 10 բաժին 7 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 17800,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 12280,0 հազար դրամ կամ կատարվել է 67,0 %-ով:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ

1.ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժին 1-ին խումբ 2 դաս՝ նախատեսված գումարը կազմում է 349928,3 հազար դրամ: Վարչական բյուջեի պահուստային միջոցներից ֆոնդային բյուջե նախատեսվել է 339 706,5 հազար դրամ հատկացում, որից փաստացի կատարվել է 260 000,0 հազար դրամը:

ԾԱԽՍԵՐ/ֆոնդային բյուջե/

1. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, հոդված 5113՝ տարեկան նախատեսված 1275182,3 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը ինն ամսում կազմել է 1133491,4 հազար դրամ կամ կատարվել է 88,8 %-ով:
2. Վարչական սարքավորումներ, հոդված 5122՝ նախատեսված 1906,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 1863,8 հազար դրամ կամ կատարվել է 97,8 %-ով:
4. Այլ մեքենաներ և սարքավորումներ,հոդված 5129՝ նախատեսված 1000.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս չի կատարվել:
5. Նախագծահետազոտական ծախսեր, հոդված 5134 նախատեսված 20500,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 6988,0 հազար դրամ կամ կատարվել է 34,1 %-ով:

2023 թվականի ինն ամսում ավարտվել են 2022թվականի 3-րդ եռամսյակին մեկնարկած սուբվենցիոն ծրագրերից Արմավիր քաղաքի թիվ 3 և թիվ 7 մանկապարտեզների շենքերի ջեռուցման համակարգի կառուցման, գազաֆիկացման, հին դռները և պատուհանները նորով փոխարինման, Լենուղի և Այգեվան գյուղերի ջրամատակարարման ցանցերի վերակառուցման, Արմավիր քաղաքի Մ.Գորկու անվան փողոցի հիմնանորոգման աշխատանքները, Մյասնիկյան գյուղի մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցման և սանհանգույցի վերանորոգման, Սարդարապատ գյուղի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները:Ավարտվել են Այգեվան և Նորավան գյուղերի Կենտրոնական փողոցների հիմնանորոգման աշխատանքները, Խանջյան գյուղի մշակույթի տանն հարակից պուրակի բարեկարգման աշխատանքները: Մեկնարկել և ընթացքի մեջ են Հացիկ գյուղի ջրամատակարարման ցանցի վերակառուցման, Արմավիր քաղաքի Կենտրոնական հրապարակի շատրվանի վերակառուցման, քաղաքի փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Արմավիր համայնքի 2023թ. բյուջեի ինն ամսում ընդամենը նախատեսված 2 387 409,4 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 2 269 446,7 հազար դրամ կամ կատարվել է 95,1 %-ով:

ԲՅՈՒՋԵԻ ՍԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Արմավիր համայնքի բյուջեի 2023 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 588032.7 հազար դրամ, իսկ ինն ամիսների փաստացի հավելուրդը կազմել է 164 085,8 հազար դրամ: